ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԳԾԱՆՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-23/5

ք. Մասիս

«12» հունվարի 2023թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Համբարձումյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՌԵԳԻՈՆՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ճանապարհային գծանշումների իրականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և

հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված

ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մասիս համայնք	**«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ**
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4	**ք. Երևան, Միկոյան 4շ.29բն**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900 432 330 034	**Հ/Հ 1150021392572591**
ՀՎՀՀ 04240324	**ՀՀՎՀ 02835332**
	Հ. Ստեփանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » հունվարի 2023թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	34921140	ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի կարիքների համար ճանապարհային գծանշումների իրականացման ծառայություններ Ներկայացված է ստորև	դրամ	8 000 000	Ըստ պատվերի	Մասիս համայնք	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2023 թ. ներառյալ

	Տեխնիկական բնութագիր							
	Մասիս համայնքում ճանապարհային գծանշումների իրականացման և պահպանապատերի վերանորոգման ծառայությունների մատուցման							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տեխնիկական բնութագիրը	չ/մ	քանակը	միավորի գինը	հասցեն	ժամկետը
1	34921140	Հորիզոնական գծանշում 10 սմ	Ճանապարհայինգծանշման իրականացմանծառայությանմատուցումը, որը պետք է իրականացվի գծանշման մեխանիզմի միջոցով՝ 10սմ լայնությամբ (կիրառվող գույները՝ սպիտակ, դեղին, սև, կարմիր, նարջագույն, ներառում է՝ 1) գծանշման ընթացքում անվտանգությունը ապահովելու նպատակով ճանապարհի մասնակի կամ ամբողջական փակում (բուրգերով, ժամանակավոր նշաններով, լուսավորվող զգուշացնող նշաններով և այլն). 2) գծանշելուց առաջ հատուկ մեքենա-սարքավորումների միջոցով ճանապարհի մաքրում,երթևեկությանփոփոխության դեպքում՝ փոփոխվողհինգծանշմանմաքրումհամապատասխանմեքենասարքավորմանմիջոցով,նախնականչափագրում (հսկիչ կետերը որոշելուց հետո դրանց միացումը փոշի կավիճի կամ համարժեք այլ նյութերի և պարանի միջոցով կամ այլ մեթոդով). 3)գծանշմանիրականացումհատուկգծանշողմեքենաների կամ մեխանիզմների և ճանապարհային գծանշման համար նախատեսված ներկանյութի միջոցով: Գծանշումըիրականացնելուընթացքումներկիվրաավելացնելլուսանդրադարձնողապակյագնդիկներ՝ գիշերայինտեսանելիությանավելացման նպատակով: Գծանշումը իրականացնելուց հետո ներկի չորացման նպատակով պետք է ապահովվի գծանշված տարածքի ոչ անցանելի լինելը: Գծանշումը պետք է իրականացվի ճանապարհային գծանշման համար նախատեսված ներկանյութերով, ճանապարհային գծանշման համար նախատեսված մեքենասարքավորումներով և	դրամ	1	180	Մասիս համայնք	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2023թ

			համապատասխան քանակությամբ աշխատակազմի միջոցով: Գծանշման ներկանյութին ներկայացվող պահանջները հետևյալն են. գույնը՝ սպիտակ, դեղին, կարմիր,սև և նարնջագույն: պայծառությունը՝ դեղին ներկանյութի՝ ոչ պակաս 80%, նարնջագույն ներկանյութի՝ ոչ պակաս 80%, սպիտակ ներկանյութի՝ ոչ պակաս 60%, չցնդող նյութերի զանգվածային մաս՝ոչ պակաս 75%, չորացման ժամանակը՝ ոչ ավել 20 րոպե, ջրակլանումը՝ ոչ ավելի 1,5% դիմացկունությունը ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ -40°C մինչև +60°C (Օրինակ՝ գծանշման համար ներկ Эмаль АК-511«ХОЛОР-М» Ф): Պատվածքիամրությունը՝քերամաշելիությանննկատմամբ՝ոչ պակաս 1կգ/մկմ,մաշակայունությունը քաղաքային տիպի ճանապարհների համար՝ ոչ ավել 40%, խտությունը՝ ոչ պակաս 1,5 գր/սմ^3, վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանվկայագրի առկայություն: Գծանշումները պետք է իրականացվեն ժամանակակից սարքավորումներով: Ծառայությունը՝պետք է մատուցվի՝համաձայն ՀՀ կառավարության 10/01/2008թ. "Ճանապարհային գծանշումները՝ներկայացվող պահանջները, դրակիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելումասին" N 113-Ն, ՀՀ կառավարության 29/06/2006թ. «Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N1206-Ն որոշումների, ինչպես նաև ԳՕՍՏ 52289-2004 և ԳՕՍՏ 52290-2004 պահանջներին համապատասխան: Ծառայությունը՝մատուցվում է պատվիրատուի կողմից գրավոր առաջադրանքը՝ստանալուց՝ օրվանից 24 ժամվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ եղանակային պայմանները թույլ չեն տալիս իրականացնել գծանշման աշխատանքներ/ջերմաստիճանը պետք է լինի +5°C և բարձր, ճանապարհի մակերեսը պետք է լինի չոր և այլն/: Վճարումը կիրականացվի ըստ փաստացի կատարված գծանշման քանակի: Անհրաժեշտության դեպքում անվտանգության ապահովման և ճանապարհների փակման գործընթացն ապահովում է Կապալառուն՝ իր ուժերով և միջոցների հաշվին:					
2	34921140	Հորիզոնական գծանշում 15 սմ	Ճանապարհային գծանշման իրականացման ծառայության մատուցումը, որը պետք է իրականացվի գծանշման մեխանիզմի միջոցով՝ 15 սմ լայնությամբ (կիրառվող գույները՝ սպիտակ, դեղին, սև, կարմիր, նարնջագույն), ներառում է՝ 1) գծանշման ընթացքում անվտանգությունը ապահովելու նպատակով ճանապարհի մասնակի կամ ամբողջական փակում (բուրգերով, ժամանակավոր նշաններով, լուսավորվող զգուշացնող նշաններով և այլն). 2) գծանշելուց առաջ հատուկ մեքենա-սարքավորումների միջոցով ճանապարհի մաքրում, երթևեկության փոփոխության դեպքում փոփոխվող հին գծանշման մաքրում համապատասխան մեքենասարքավորման միջոցով, նախնական չափագրում (հսկիչ կետերը որոշելուց հետո դրանց միացումը փոշի կավիճի կամ համարժեք այլ նյութերի	դրամ	1	220	Մասիս համայնք	Համաձայն ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2023թ

			և պարանի միջոցով կամ այլ մեթոդով). 3) գծանշման իրականացում հատուկ գծանշող մեքենաների կամ մեխանիզմների և ճանապարհային գծանշման համար նախատեսված ներկանյութի միջոցով: Գծանշումը իրականացնելու ընթացքում ներկի վրա ավելացնել լուսանդրադարձնող ապակյա գնդիկներ գիշերային տեսանելիության ավելացման նպատակով: Գծանշումը իրականացնելուց հետո ներկի չորացման նպատակով պետք է ապահովվի գծանշված տարածքի ոչ անցանելի լինելը: Գծանշումը պետք է իրականացվի ճանապարհային գծանշման համար նախատեսված ներկանյութերով, ճանապարհային գծանշման համար նախատեսված մեքենասարքավորումներով և համապատասխան քանակությամբ աշխատակազմի միջոցով: Գծանշման ներկանյութին ներկայացվող պահանջները հետևյալն են. գույնը՝ սպիտակ, դեղին, կարմիր, սև և նարնջագույն, պայծառությունը՝ դեղին ներկանյութի՝ոչ պակաս 80%, նարնջագույն ներկանյութի՝ 80%, սպիտակ ներկանյութի՝ ոչ պակաս 60%, չցնդող նյութերի զանգվածային մաս՝ ոչ պակաս 75%, չորացման ժամանակը՝ ոչ ավել 20 րոպե, ջրակլանումը՝ ոչ ավելի 1,5%, դիմացկունությունը ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ - 40°C մինչև +60°C,(Օրինակ՝ գծանշման համար ներկ ЭмальАК-511«КОЛОР-М» Ф): Պատվածքի ամրությունը քերամաշելիության նկատմամբ՝ ոչ պակաս 1կգ/մկմ, մաշակայունությունը քաղաքային տիպի ճանապարհների համար՝ ոչ ավել 40%, խտությունը՝ ոչ պակաս 1,5 գր/սմ3, վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագրի առկայություն: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 10/01/2008թ. "Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրակիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելու մասին" N 113-Ն, ՀՀ կառավարության 29/06/2006թ. «Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N1206-Ն որոշումների, ինչպես նաև ГОСТ 52289-2004 և ГОСТ 52290-2004 պահանջներին համապատասխան: Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից գրավոր առաջադրանքը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ եղանակային պայմանները թույլ չեն տալիս իրականացնել գծանշման աշխատանքներ/ջերմաստիճանը պետք է լինի +5°C և բարձր, ճանապարհի մակերեսը պետք է լինի չոր և այլն/: Վճարումը կիրականացվի ըստ փաստացի կատարված գծանշման քանակի: Անհրաժեշտության դեպքում անվտանգության ապահովման և ճանապարհների փակման գործընթացն ապահովում է Կապալառուն՝ իր ուժերով և միջոցների հաշվին:					
3	34921140	Հորիզոնական գծանշում ձեռքով 10սմ	Ճանապարհային գծանշման իրականացման ծառայության մատուցումը, որը պետք է իրականացվի վրձնի կամ ներկագլանակի միջոցով ներառում է՝ 1) գծանշմանը ընթացքում անվտանգությունը ապահովելու նպատակով ճանապարհի մասնակի կամ ամբողջական փակում (բուրգերով, ժամանակավոր նշաններով, լուսավորվող զգուշացնող	դրամ	1	200	Մասիս համայնք	Համաձայն ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2023թ

			Նշաններով և այլն). 2) գծանշելուց առաջ հատուկ մեքենա-սարքավորումների միջոցով ճանապարհի մաքրում, երթևեկության փոփոխության դեպքում փոփոխվող հին գծանշման մաքրում համապատասխան մեքենասարքավորման միջոցով, նախանական չափագրում (հսկիչ կետերը որոշելուց հետո դրանց միացումը փոշի կավիճի կամ համարժեք այլ նյութերի և պարանի միջոցով կամ այլ մեթոդով). 3) գծանշման իրականացում վրձնի կամ ներկագլանակի և ճանապարհային ներկի միջոցով: Գծանշումը իրականացնելու ընթացքում ներկի վրա ավելացնել լուսաանդրադարձնող ապակյա գնդիկներ գիշերային տեսանելիության ավելացման նպատակով: Գծանշումը իրականացնելուց հետո ներկի չորացման նպատակով պետք է ապահովվի գծանշված տարածքի ոչ անցանելի լինելը: Գծանշումը պետք է իրականացվի համապատասխան քանակությամբ աշխատակազմի միջոցով: Գծանշման ներկանյութին ներկայացվող պահանջները հետևյալն են. գույնը՝ սպիտակ, դեղին, կարմիր, սև և նարնջագույն, պայծառությունը դեղին ներկանյութի՝ ոչ պակաս 80%, Նարնջագույն ներկանյութի՝ ոչ պակաս 80%, սպիտակ ներկանյութի՝ ոչ պակաս 60%, չցնդող նյութերի զանգվածային մասը՝ ոչ պակաս 75%, չորացման ժամանակը՝ ոչ ավել 20 րոպե, ջրակլանումը՝ ոչ ավելի 1,5%, դիմացկունությունը ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ - 40°C մինչև +60°C(Օրինակ՝ գծանշման համար ներկ ЭмальАК-511«КОЛОР-М» Ф): Պատվածքի ամրությունը քերամաշելիության նկատմամբ՝ ոչ պակաս 1կգ/մկմ, մաշակայունությունը քաղաքային տիպի ճանապարհների համար՝ ոչ ավել 40%, խտությունը՝ ոչ պակաս 1,5 գր/սմ3, վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագրի առկայություն: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 10/01/2008թ. "Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրակիրառման կանոնները, ճանապարհային նշանակապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելու մասին" N 113-Ն, ՀՀ կառավարության 29/06/2006թ. «Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N1206-Ն որոշումների, ինչպես նաև ГОUS 52289-2004 և ГОUS 52290-2004 պահանջներին համապատասխան: Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից գրավոր առաջադրանքը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ եղանակային պայմանները թույլ չեն տալիս իրականացնել գծանշման աշխատանքներ/ջերմաստիճանը պետք է լինի +5°C և բարձր, ճանապարհի մակերեսը պետք է լինի չոր և այլն/: Վճարումը կիրականացվի ըստ փաստացի կատարված գծանշման քանակի: Անհրաժեշտության դեպքում անվտանգության ապահովման և ճանապարհների փակման գործընթացն ապահովում է Կապալառուն՝ իր ուժերով և միջոցների հաշվին:					

4	34921140	Պահպանապատերի հարդարում	Ճանապարհային պահպանապատերի հարդարման ծառայությունների մատուցումը ներառում է հարդարման ընթացքում անվտանգությունը ապահովելու նպատակով ճանապարհի մասնակի փակում (բուրգերով, ժամանակավոր նշաններով և այլն), պահպանապատերի վրայից հին ներկի մաքրում, հարդարում ծեփամածկի և սալիկի սոսինձի խարնուրդով՝ 3/1 հարաբերակցությամբ, հղկաթղթով մշակում: Հարդարումը իրականացնելուց հետո նյութի չորացման նպատակով պետք է ապահովվի հարդարված տարածքի ոչ անցանելի լինելը: Հարդարումը պետք է իրականացվի սպիտակ սալիկի սոսինձով և ճակատային մոխրագույն ծեփամածիկով և համապատասխան քանակությամբ աշխատակազմով: Ծեփամածիկին ներկայացվող պահանջներն են՝ մոխրագույն, հանքային, էկոլոգիապես մաքուր և անվտանգ, կայուն եղանակային փոփոխությունների նկատմամբ, Բաղադրությունը՝ կալցիումի կարբոնադ, պորտլանդցեմենտ,ցելյուլոզային հավելանյութեր, լցանյութեր, մոդիֆիկացնող հավելանյութեր: Սոսինձին ներկայացվող պահանջներն են՝ սպիտակ, ջրի խառնուրդը՝ ոչ ավել 24% ջուր, չորացումը՝ ոչ ավել 8 ժամ: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 10/01/2008թ. "Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրակիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ ցարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելումասին" N 113-Նորոշման, ինչպես նաև ԳՕՍՏ 52289-2004 և ԳՕՍՏ 52290-2004 պահանջների նամապատասխան: Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից գրավոր առաջադրանքը ստանալուց հետո հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ եղանակային պայմանները թույլ չեն տալիս իրականացնել գծանշման աշխատանքներ/ջերմաստիճանը պետք է լինի +5°C և բարձր, ճանապարհի մակերեսը պետք է լինի չոր և այլն/: Վճարումը կիրականացվի ըստ փաստացի կատարված հարդարման քմ քանակի: Անհրաժեշտության դեպքում անվտանգության ապահովման և ճանապարհների փակման գործընթացն ապահովում է Կապալառուն՝ իր ուժերով և միջոցների հաշվին:	դրամ	1	1500	Մասիս համայնք	Համաձայն ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2023թ

5	34921140	Ուղղաձիգ գծանշում/պահպանապատերինելում/	Ուղղաձիգգծանշման/պահպանապատերի ներկման ծառայությունների մատուցումը ներառում է գծանշման ընթացքում անվտանգությունը ապահովելու նպատակով ճանապարհի մասնակի փակում (բուրգերով, ժամանակավոր նշաններով և այլն), պահպանապատերի ներկում կապույտ (1/3 մասը) և սպիտակ (2/3 մասը) գույնի համապատասխան ներկերով վրձնի, ներկագլանակի կամ մեխանիզմի միջոցով: Պահպանապատերի ներկումը իրականացնելուց հետո նյութի չորացման նպատակով պետք է ապահովվի հարդարված տարածքի ոչ անցանելի լինելը: Ուղղաձիգ գծանշումը պետք է իրականացվի համապատասխան քանակությամբ աշխատակազմով: Ուղղաձիգ գծանշման ներկանյութին ներկայացվող պահանջներն են. գույնը՝ սպիտակ,սև,կապույտ և կարմիր, ալկիդային ՊՖ-115 , փայլուն , չորացման ժամանակը՝ ոչ ավել 14 ժամ, չցնդող նյութերի զանգվածային մաս՝ ոչ պակաս 75%, պատվածքի ամրությունը քերամաշելիության նկատմամբ՝ ոչ ավել 25կգ/մկմ, պայծառությունը՝ ոչ պակաս 80%, վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխան վկայագրի առկայություն: Ծառայությունը պետք է մատուցվի համաձայն ՀՀ կառավարության 10/01/2008թ. "Ճանապարհայինգծանշմանըներկայացվողպահանջները, դրակիրառմանկանոնները, ճանապարհայինցանկապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելումասին" N 113-Նորոշման, ինչպես նաև ԳՕՍՏ 52289-2004 և ԳՕՍՏ 52290-2004 պահանջներինհամապատասխան: Ծառայությունըմատուցվումէպատվիրատուիկողմիցգրավորառաջադրանքըստանալուօրվանցհաշված 30 օրացուցայինօրվաընթացքում՝ այդառաջադրանքումնշվածվայրերումմաքանակներով, բացառությամբ այն դեպքերի,երբ եղանակային պայմանները թույլ չեն տալիս իրականացնել գծանշման աշխատանքներ/ջերմաստիճանը պետք է լինի +5 °C և բարձր, ճանապարհի մակերեսը պետք է լինի չոր և այլն/: Վճարումը կիրականացվի ըստ փաստացի կատարված գծանշման քանակի: Անհրաժեշտության դեպքում անվտանգության ապահովման և ճանապարհների փակման գործընթացն ապահովում է Հապալառուն՝ իր ուժերով և միջոցների հաշվին:	դրամ	1	1800	Մասիս համայնք	Համաձայն ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2023թ

Պայմանագիրը կնքվելու է 8 000 000 /ութ միլիոն/ ՀՀ դրամ ընդհանուր գումարով, սակայն ծառայությունները մատուցվելու են ըստ պատվերի, իսկ վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների դիմաց

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիս համայնք
ք. Մասիս, Վեներոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն
Հ/Հ 900 432 330 034
ՀՎՀՀ 04240324

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 4շ.29բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150021392572591
ՀՎՀՀ 02835332
Հ. Ստեփանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 12 » հունվարի 2023թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/Հ	պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 202 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	34921140	ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի կարիքների համար ճանապարհային գծանշումների իրականացման ծառայություններ	% …	% …	% …	% …	% …	% …	% …	% …	% …	% …	% …	% …	% …

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիս համայնք
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 330 034
ՀՎՀՀ 04240324

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Միկոյան 4շ.29բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150021392572591
ՀՀՎՀ 02835332
Հ. Ստեփանյան

(ստորագրություն)
Կ.Տ.